

Եւ սիրով վարուիլ, օրինեց զամենքը, համբուրեց մէկիկեւմէկիկ եւ ելաւ երթալ իւր կորուստը փնտրելու:

Մենք թողունք Չաւեն Կարնոյ ճամփուն վրայ, եւ երթանք փնտրել Գրիգոր ու Սուրեն, որոց դիակունք չի գտնելով նա՝ յոյս ըրած էր թէ օր մը երբ իշխանիկը դառնար, Արփենին գոնէ իրեն պիտի ներկայացներ, միայնակ եւ սիրասուն նշխար Մամիկոնեան հայրենի ճոխութեան եւ հրեշտականման մօր եւ քրոջ:

Վիրաւորը մեզ պատմեց թէ ինչպէ՞ս Սուրենի եւ Գրիգորի ձիաւոր խումբը Վարդանաբերդի հրդեհը տեսնելով դիմէր էին հոն նահանջի ճանապարհ միշտ իրենց յուսալով, եւ թէ ինչպէս թշնամուոյն բազմաթիւ հեծելոց խումբը վրայ հասնելով՝ շրջապատեալ յամենուստ սկսած էին պատերազմիդ Սուրեն քանի մը հողի կ'որսնցնելէն վերջ իր խումբէն՝ տեսնելով անխուսափելի վտանգը փոքրիկ բլուրի մը վրայ քաշուեցաւ իրեններով, այդ բլուրը Վարդանաբերդի գերեզմանատունն էր, քիչ հեռաւորութեամբ:

Այդ գերեզմանոցին մէջ՝ մահարձանները պատնէշ առած՝ յուսահատ կռուով իրենց կեանքը թանկ ծախել որոշեցին հայ փոքրիկ խումբը. Սուրենի հզօր ձայնը՝ «Տղա՛ք, մեռնի՛նք, բայց մեռցնենք եւ այնպէս մեռէինք քաջութեամբ», կ'որոտար ամենուն ականջին. այդ քառասուն-յիսուն հոգին շրջապատ եալ հազարներէ, այնպիսի դիմադրութիւն ըրին եւ այնպիսի կատաղութեամբ կռուեցոյն երկու ժամ, իրենց աղեղներէն ելած նետերը, իրենց պարսատիկներէն ելած քարերը այնպէս կը հարուածէին հեռունէն, եւ յարձակումներու դէմ իրենց վաղակաւորներն ու մուրճերը այնպիսի հարուածներ տուին թշնամուոյն մօտէն, որ Շէյխ Ալի այդ քաջութեան վրայ հիացած ղադրեցուց յարձակմունքը եւ պատգամաւոր մը յուղարկեց յայտնելով թէ՝ «Ինք պատրաստ էր իրենց կեանքը շնորհել եթէ անձնատուր լինին»: Եւ կէս ժամ միջոց կ'ուտար մտածելու: Սուրեն դաշնադրութեան մտնելու յանձնառու եղաւ. բայց արաբը պայման մը միայն ուներ. «կեանք միայն շնորհել». երբ Սուրեն զիջանիլ յանձն առաւ, իրեն դէմ անկարծելի դժուարութիւն մը ելաւ: Գրիգոր որ առիւծի պէս եւ իւր հասակէն վեր պատերազմէր էր, «մեռնի՛նք» բառէն զատ բերնէն ուրիշ խօսք չէր հաներ, այդ հայրենի պալատան բոցն ու ծուխը զինք համոզած էին թէ իր մայրը եւ քոյրերը մեռած էին, ուստի «մեռնի՛նք, մեռնի՛նք» կը կրկներ: Սուրենի բոլոր ազդեցութիւնը անօգուտ պիտի լինէր՝ եթէ ամեն պատերազմողք վերջապէս յանձն չառնուէն գերութիւնը կենաց հետ փոխանակել: Ուստի պատանին երբ մինակ մնաց եւ ամենքը զենքերը թողին, ինք այն թոպէին ինկաւ գերեզմանի մը վրայ, եւ արտասուաց հեղեղ մը սկսաւ իջեցնել. բոլոր Սուրենի յորդորներուն եւ ապագային համար տուած յոյսերուն պատասխան անգամ չի տուաւ: